

Հաստատված է՝  
«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական ինստիտուտ»  
ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի  
« 29 » հոկտեմբեր 2013թ. նիստում  
Խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ**  
**ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**  
**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ հիմնադիր) հոգեբանական ծառայությունների կենտրոնը (այսուհետ՝ ՀԾԿ) ստեղծվում է որպես հոգեբանության ամբիոնին կից ստորաբաժանում:
- 1.2. Ստորաբաժանումը լիազորվում է ինստիտուտի կողմից իրականացնելու հոգեբանական ծառայություն (ուսումնամեթոդական և գիտագործնական գործունեություն)՝ համաձայնեցնելով հիմնադիրի հետ:
- 1.3. Ստորաբաժանման հիմնադիր փաստաթղթերն են Գյումրու մանկավարժական ինստիտուտի գիտական խորհրդի որոշումը, ռեկտորի հրամանը և սույն կանոնադրությունը:
- 1.4. Ստորաբաժանման գործունեությունը կարգավորվում է ՀՀ գործող օրենսդրությամբ, բուհի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
- 1.5. Ստորաբաժանումը հիմնադրի հետ համաձայնեցված որոշում է իր ձևը, կառուցվածքը և աշխատակազմը:
- 1.6. Ստորաբաժանման իրավաբանական հասցեն է.  
ք. Գյումրի, Պարույր Սևակի 4:
- 1.7. Ստորաբաժանման անվանումը՝  
Հայերեն- Հոգեբանական ծառայությունների կենտրոն  
Ռուսերեն- Центр психологических служб  
Անգլերեն- Centre of Psychological Service

## 2. ՄՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ստորաբաժանման գործունեության նպատակն է բուհի ներքին շահառուների կարիքների բավարարման նպատակով իրականացնել հոգեբանական ծառայություններ, գործնական հոգեբանության վերապատրաստումներ և սեմինարներ (թրեյնինգներ):

Ստորաբաժանման գործունեության բնագավառներն են՝

- 2.1. Հոգեբանական, հոգեախտաբանական, սոցիալական, մանկավարժական, ուսումնամեթոդական համակարգի ստեղծումը:
- 2.2. Հոգեախտորոշման, հոգեվերականգնման խորհրդատվական ծառայության կազմակերպումը:
- 2.3. Նշված ոլորտներում գիտական ծրագրերի և հետազոտությունների մշակումը և իրականացումը:
- 2.4. Դիդակտիկ նյութերի մշակումը:
- 2.5. Ուսանողների պատրաստության ու գործնական կարողությունների բարելավումը:
- 2.6. Մանկավարժ-հոգեբանների մասնագիտական որակավորման բարձրացման նպաստումը:
- 2.7. Հոգեբանական գիտելիքների լայն քարոզչությունը:
- 2.8. Հոգեբանական առարկաների արդյունավետ դասավանդման նպաստումը:

## 3. ՄՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ստորաբաժանումը, համաձայնեցնելով հիմնախնդրի հետ՝ կատարելու է հետևյալ բնույթի աշխատանքները՝

- 3.1. Կազմակերպել անհատական և խմբակային հոգեբանական թրեյնինգներ և խորհրդատվություններ հոգեբանական վերականգնման անհրաժեշտություն ունեցող ներքին շահառուների համար:
- 3.2. Ուսանողների համար կազմակերպել թեմատիկ պարապմունքներ և հոգեբանական պրակտիկա:
- 3.3. Մարզի դպրոցների ուսուցիչների համար անցկացնել աշակերտների հոգեբանամանկավարժական ախտորոշման հարցերին նվիրված գործնական պարապմունքներ:
- 3.4. Կազմակերպել հեռահար սեմինարներ (skype-seminar) այլ բուհերի հոգեբանական ծառայությունների հետ:
- 3.5. ՀՀ օրենսդրությամբ և բուհի կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

## 4. ՄՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Ստորաբաժանման աշխատակիցներ կարող են լինել հոգեբանության ամբիոնի այն դասախոսները, որոնք իրազեկ են գործնական հոգեբանության ոլորտին: Աշխատակցումը ՀԾԿ-ին արտահայտվում է դասախոսի ընդհանուր աշխատանքային ծանրաբեռնվածության մեջ՝ 140 ժամով:

Հոգեբանական խորհրդատվության ստորաբաժանման ոչ հաստիքային աշխատակիցներ կարող են լինել հոգեբանամանկավարժական ամբիոնների ասպիրանտները, հայցորդներն ու ավարտական կուրսերի (բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր) գերազանց առաջադիմություն ու հոգեբանական որոշակի կարողություններ ունեցող ուսանողները, ովքեր ունեն՝

- ա) հոգեբանական բնագավառում պրակտիկ աշխատանք կատարելու ունակություններ,
- բ) տրամադրված են կատարելագործելու իրենց տեսական և գործնական գիտելիքներն այս բնագավառում,
- գ) անվերապահորեն ենթարկվում են բուհի և ստորաբաժանման գործող կանոնադրությանը, հոգեբանի բարոյական նորմերին, հոգեբանական կենտրոնի պահանջներին,
- դ) պահում են այցելուին վերաբերող հոգեբանական բնույթի գաղտնիքները:

#### 4.1. Ստորաբաժանման իրավունքները և պարտականությունները

Ստորաբաժանումը հիմնադրի հետ համաձայնեցված իրավունք ունի՝

##### 4.2. 1. Ստորաբաժանումն իրավունք ունի ունենալու ձևաթուղթ:

4.1.2. Տրամադրել հավաստագրեր գործնական հոգեբանության ոլորտում սեմինարներին (թրեյնինգներին) մասնակցած ուսանողներին:

4.1.3. Վարել գործնական և գիտական աշխատանքներ, համագործակցել Շիրակի մարզի դպրոցների և ձեռնարկությունների հետ:

#### 4.2 Իր գործունեության ընթացքում ղեկավարվել ՀՀ օրենսդրության հիմնադիր որոշումներով, հրամաններով և պայմանագրերով:

4.2.1. Վարել ստորաբաժանման գործունեության արդյունքների հաշվառում, սահմանված կարգով տալ հաշվետվություններ և կրել պատասխանատվություն դրանց ստույգ լինելու համար:

### 5. ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

#### 5.1. Ստորաբաժանման գույքի աղբյուրներն են՝

5.1.1. հիմնադրի ներդրումը,

5.1.2. բարեգործական ներդրումները, նվիրատվությունները, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

### 6. ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1. Ստորաբաժանման ղեկավար նշանակվում է հոգեբանության ամբիոնի վարիչը կամ ամբիոնի վարիչի կողմից ներկայացված աշխատակիցը՝ ռեկտորի հրամանով:

6.2. Ստորաբաժանման ղեկավարը մշակում է աշխատանքային պլան՝ ստորաբաժանման նպատակներին և խնդիրներին համապատասխան, կենտրոնացնում և վերահսկում է աշխատանքները:

6.3. Ստորաբաժանման աշխատակիցները կազմակերպում են համապատասխան սեմինարներ, իրականացնում են հետևողական աշխատանք բուհի ուսանողների հետ, սովորեցնում են նրանց հոգեախտորոշիչ մեթոդներ, հոգեկարգավորման հնարքներ դպրոցականների և նրանց

ճնողների հետ աշխատելու համար, ապահովում են լրացուցիչ ծառայությունների կատարման պայմանները՝ նպաստելով Շիրակի մարզի ազգաբնակչության հոգեկան առողջության և հոգեկան հիգիենայի պահպանմանը, օժանդակում գործնական մասնագետներին:

## **7. ՄՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ**

Ստորաբաժանումը լուծարվում է կամ վերակազմավորվում է բուհի գիտխորհրդի որոշմամբ՝ ռեկտորի հրամանով